

Համաձայնեցված է
ՀՀ ֆինանսների նախարարության հետ

Վ. Գաբրիելյան

10 հունիսի 2011 թ.

ՀՀ կառավարության առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահ
Գ. Խաչատրյան

3 հունիսի 2011 թ.

N 27

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

«ՄԻՆԶԵՎ 180 ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ «ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ԱԶԱՏ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՈՎ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՎ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն «վերաարտահանում» մաքսային ռեժիմի շրջանակներում «մինչև 180 օրվա ընթացքում «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» ռեժիմով ներմուծված ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վերադարձվում են նախկինում դրանց ներմուծման համար գանձված մաքսային վճարների գումարները, բացառությամբ մաքսավճարի, բնապահպանական և ճանապարհային վճարների»: Նշված կետով նախատեսված կարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի «Մինչև 180 օրվա ընթացքում «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման դեպքում նախկինում դրանց ներմուծման համար գանձված մաքսային վճարների վերադարձման կարգը հաստատելու մասին» N 1929-Ն որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի N 1929-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի համաձայն՝ մաքսային վճարների վերադարձի համար մաքսային վճար վճարողը ներկայացնում է, մասնավորապես՝ հարկային մարմնի կողմից տրամադրված տեղեկանք Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա հարկային պարտավորությունների և մաքսային մարմիններում վճարված ավելացված արժեքի հարկի գումարների հաշվին գոյացած դեբետային մնացորդի վերաբերյալ: Նույն կարգի 5-րդ կետի համաձայն՝ «ավելացված արժեքի հարկի գծով վերադարձվող գումարները չեն կարող գերազանցել տեղեկանքում (N 6 ձև) նշված՝ մաքսային մարմիններում վճարված ավելացված արժեքի հարկի գումարների հաշվին գոյացած դեբետային մնացորդի չափը»:

2009 թվականի հունվարի 1-ից գործող՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքից «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով (բացառությամբ՝ «Ժամանակավոր ներմուծում վերամշակման համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների նկատմամբ «Վերաարտահանում» ռեժիմի կիրառման դեպքերի) ապրանքների արտահանման գործարքները ավելացված արժեքի հարկով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում):

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մատակարարների հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում, հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններում, կրճատ հաշիվ ապրանքագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցման (պակասեցման) ենթակա չեն, մասնավորապես՝ օրենքի 7 հոդվածի համաձայն հարկվող օբյեկտ չհամարվող գործարքների մասով: Միաժամանակ նույն կետի համաձայն՝ «հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված դեպքերում՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված գործարքներին ուղղակիորեն վերաբերող ձեռքբերումների մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում հաշվանցված ԱԱՀ-ի

գումարները ենթակա են վերաձևակերպման և պետք է միացվեն ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերման գնին կամ արտադրության ու շրջանառության ծախսերին»:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածով՝ **պաշտոնապես պարզաբանում եմ.**

2009 թվականի հունվարի 1-ից հետո իրականացրած՝ Հայաստանի Հանրապետության տարածքից «Վերաարտահանում» մաքսային ռեժիմով (բացառությամբ՝ «Ժամանակավոր ներմուծում վերամշակման համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների նկատմամբ «Վերաարտահանում» ռեժիմի կիրառման դեպքերի) ապրանքների արտահանման գործարքների իրականացման համար ձեռք բերված (այդ թվում՝ ներմուծված) ապրանքների մատակարարների հարկային հաշիվներում, հսկիչ-դրամարկային մեքենաների կտրոններում, կրճատ հաշիվ ապրանքագրերում (ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները պակասեցվում են հաշվանցվող ԱԱՀ-ի գումարներից՝ «վերաարտահանում» մաքսային ռեժիմով ապրանքների արտահանման հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված (ներկայացման ենթակա) ԱԱՀ-ի հաշվարկով:

Հաշվի առնելով, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների կատարման (հաշվանցվող ԱԱՀ-ի գումարների վերաձևակերպման) դեպքում մաքսային մարմիններում վճարված ավելացված արժեքի հարկի գումարների հաշվին գոյացած դեբետային մնացորդ 2009 թ. հունվարի 1-ից հետո չի առաջանում, մինչև 180 օրվա ընթացքում «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» ռեժիմով ներմուծված ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանման դեպքում մաքսային մարմինների կողմից ԱԱՀ-ի գումարների վերադարձ կարող է իրականացվել, եթե մաքսային մարմիններում վճարված ավելացված արժեքի հարկի գումարների հաշվին գոյացած դեբետային մնացորդի բացակայությունը վկայող տեղեկանքի հետ միաժամանակ հարկ վճարողը մաքսային մարմիններին է ներկայացնում գրավոր հավաստում առ այն, որ իր կողմից կատարվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը և ապրանքների ներմուծման ժամանակ մաքսային մարմիններին վճարված ԱԱՀ-ի գումարը պակասեցվել է «վերաարտահանում» մաքսային ռեժիմով ապրանքների արտահանման հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկով (այդ թվում՝ ճշգրտված հաշվարկով): Սույն պարբերությանը համապատասխան ԱԱՀ-ի գումարների վերադարձ կարող է իրականացվել մինչև ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի N 1929-Ն որոշման մեջ սույն պարզաբանման հրապարակման պահից հետո դրա դրույթները «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 26-րդ հոդվածներով սահմանված դրույթներին համապատասխանեցնելու նպատակով փոփոխությունների կատարումը:

Այն անձինք, ովքեր ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի N 1929-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան 2009 թ. հունվարի 1-ից հետո մինչև 180 օրվա ընթացքում «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» ռեժիմով ներմուծված ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանման գործարքների մասով հարկային մարմնից ստացված տեղեկանքով հետ են ստացել (ներառյալ՝ հարկ վճարողի այլ պարտավորությունների դիմաց հաշվանցել են) ապրանքների ներմուծման ժամանակ վճարած ԱԱՀ-ի գումարները, սակայն ապրանքների վերաարտահանման հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկով նախկինում հաշվանցված ԱԱՀ-ի գումարների վերաձևակերպում չեն կատարել՝ պարտավոր են այդ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացնել ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկ և պակասեցնել հաշվանցվող գումարները: Պակասեցումը պետք է իրականացվի ԱԱՀ-ի հաշվարկի 16.2 տողի «[Բ] (պակասեցում)» վանդակում:

«Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծման ժամանակ մաքսային մարմիններին վճարված և «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա այդ ապրանքների վերաարտահանման հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկով (այդ թվում՝ ճշգրտված հաշվարկով) վերահաշվարկված (նախկինում հաշվանցված ավելացված արժեքի հարկի գումարներից պակասեցված) ավելացված արժեքի հարկի գումարները շահութահարկով (եկամտահարկով) հարկման

նպատակով արտադրության և (կամ) շրջանառության ծախսերին չեն միացվում, քանի որ մաքսային մարմինների կողմից վերադարձի դեպքում դրանք այլևս չեն կարող համարվել որպես չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկի գումարներ: